


**ՋԵԿՈՒՅՑ.  
ԴԱՏԱԽԱՁՆԵՐԻ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

---

**2022**





Սույն հետազոտությունն իրականացվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ Գլխավոր դատախազության համակարգում միջազգային ստանդարտների ամրապնդում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետներն ու եզրահանգումները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի տեսակետների հետ:

*Զեկույցի հեղինակներն են Հասմիկ Հարությունյանը և Արաքս Մելքոնյանը*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ .....	3
Միջազգային չափանիշներ և ընդունված փորձ .....	5
Կարգապահական պատասխանատվության հիմքերն ու տեսակները .....	7
Պատասխանատվության տեսակները .....	8
Պատասխանատվության ենթարկող իրավասու մարմինները.....	11
Վարույթի հրապարակայնությունը .....	13
Վարույթի ժամկետները .....	14
Կարգապահական պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում .....	14
Կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը.....	15
Կարգապահական վարույթ հարուցելու իրավասու մարմինները .....	22
Կարգապահական վարույթի իրականացումը.....	25
Էթիկայի հանձնաժողովի դերն ու իրավասությունների շրջանակը .....	28
Կարգապահական տույժի տեսակները և դրանց նշանակումը.....	29
Դատախազի իրավունքներն ու պարտականությունները վարույթի ընթացքում.....	32
Կարգապահական վարույթի ժամկետները .....	33
Կարգապահական վարույթի հրապարակայնությունը .....	34
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ .....	40
Առաջարկություններ .....	42

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դատախազների կարգապահական պատասխանատվության հարցը վերջիններիս իրավունքներին ու պարտականություններին ուղղակիորեն առնչվող կենտրոնական հարցերից է, որը իր ազդեցությունն է թողնում նաև համակարգի գործունեության ու դատախազական գործառույթների արդյունավետ իրականացման վրա:

Սույն հետազոտությունը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացված դատախազական համակարգի ուսումնասիրության մաս է, որը առավելապես կենտրոնանում է դատախազների կարգապահական պատասխանատվության հիմնահարցերի վրա: Առանձին ուսումնասիրության առարկա են դարձել դատախազների կարգապահական պատասխանատվության հիմքերն ու դրանց օրենսդրական ամրագրումը, կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում ներգրավված մարմիններն ու պատասխանատվության ենթարկելու իրավասու մարմինները, պատասխանատվության միջոցներն ու դատախազների իրավունքները վարույթի շրջանակներում: Սույն հարցերը դիտարկվել են ուսումնասիրվել են միջազգային չափանիշների ու առանձին երկրների լավագույն փորձի հետ համեմատության մեջ՝ վեր հանելով ՀՀ օրենսդրության կարգավորումների բացթողումներն ու խնդրահարույց կետերը: Նման ուսումնասիրությունն ու համեմատական վերլուծությունը թույլ է տվել վեր հանված խնդիրների հիման վրա ներկայացնել նաև փոփոխություններին ուղղված առաջարկություններ:

Առավել խորքային հետազոտության համար կազմակերպության կողմից փորձ է արվել ուսումնասիրվել դատախազների կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումները, որոնք սակայն հրապարակային չեն: Ինչը թափանցիկության եւ հրապարակայնության տեսանկյունից արդեն իսկ խնդիր է: Կազմակերպությունը որոշումները ստանալու համար դիմել է ՀՀ Գլխավոր դատախազությանը, սակայն տրամադրվել են միայն թվային տվյալներ ու ընդհանուր տեղեկություններ հարուցված վարույթների վերաբերյալ, ինչը բավարար չէր կարող լինել խորքային ուսումնասիրություն իրականացնելու համար:

### Մեթոդաբանություն

Ուսումնասիրությունն իրականացվել է հետևյալ մեթոդաբանությամբ՝

- *Փաստաթղթերի ուսումնասիրություն*

Ուսումնասիրվել են մասնավորապես «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Գլխավոր դատախազի վերաբերելի հրամանները, ոլորտը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտեր: Ուսումնասիրվել են նաև Եվրոպայի Խորհրդի կողմից ընդունված տարբեր փաստաթղթեր, Վենետիկի հանձնաժողովի ընդունած մոտեցումներն ու առանձին երկրների օրենսդրությունների վերաբերյալ ներկայացված կարծիքները, այլ մարմինների զեկույցներ ու հաստատված ստանդարտներ:

- *Տեղեկատվության հարցումներ*

Կարգապահական վարույթների վերաբերյալ տվյալներ ու պատասխանատվության ենթարկելու որոշումները ստանալու համար հարցումներ են ուղարկվել նաև ՀՀ Գլխավոր դատախազություն: Որին պատասխան սակայն ստացվել են ընդհանրացված տեղեկություններ ու թվային տվյալներ:

- *Բաց տվյալների ուսումնասիրություն*

Կազմակերպության կողմից իրականացվել է նաև դատախազների կարգապահական պատասխանատվության հարցի վերաբերյալ հասանելի տեղեկությունների ուսումնասիրություն:

## Միջազգային չափանիշներ և ընդունված փորձ

Դատախազության գործառույթների արդյունավետ իրականացման նախապայմաններից մեկը, ի թիվս այլնի, կարգապահական պատասխանատվության ինստիտուտի օրինական և արդյունավետ կիրառությունն է:

Մի կողմից, կարգապահական պատասխանատվության ինստիտուտը դիտարկվում է որպես վարքագծի կանոնակարգմանը նպաստող գործոն, մյուս կողմից սակայն, այն չպետք է դատախազների անհիմն պատասխանատվության հանգեցնի<sup>1</sup>: Որպես ընդհանուր կանոն՝ կարգապահական պատասխանատվության ինստիտուտը կարգավորող հարցերը պետք է մանրամասն օրենսդրական ամրագրում ստանան:

Ըստ այդմ, կարգապահական պատասխանատվության ենթարկելը, ինչպես նաև պաշտոնից ազատելը, պետք է նախ կարգավորում ստանա օրենքով և ուղեկցվի հստակ ու կոնկրետ չափանիշներով՝ անկողմնակալ վարույթի շրջանակներում, ինչպես նաև ընտրված պատասխանատվության միջոցի վերանայման հնարավորություն տա<sup>2</sup>:

Եվրոպայի Խորհրդի (այսուհետ՝ ԵԽ) Նախարարների կոմիտեի կողմից նշվում է, որ վարքագծի խախտումների համար դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելը ավելի նախընտրելի է, քան քրեական պատասխանատվությունը: Միննույն ժամանակ, հնարավոր են իրավիճակներ և այնպիսի խախտում, որի պարագայում նախաձեռնվի ինչպես կարգապահական պատասխանատվության վարույթ, այնպես էլ քրեական գործ հարուցվի<sup>3</sup>:

Սա իհարկե չի կարող հանգեցնել կրկնակի դատապարտման արգելքի խախտման, քանի որ կարգապահական պատասխանատվության նույնիսկ ամենախիստ պատժամիջոցը՝ պաշտոնից հեռացումը, բնույթով քրեական չէ<sup>4</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ընդունել է, որ քրեական գործով անձի արդարացումը չի կարող գործով ներգրավված դատախազին կարգապահական

<sup>1</sup> UNODC/IAP Guide, p. 32

<sup>2</sup> Bureau of the Consultative Council of European Prosecutors, Report on the independence and impartiality of the prosecution service in the Council of Europe Member states, 2017

<sup>3</sup> The Role Of Public Prosecution In The Criminal Justice System, CoE Committee of Ministers, Explanatory Memorandum to Recommendation Rec(2000)19

<sup>4</sup> Soysever v. Turkey, no 39826/98, 7 November 2000

պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ<sup>5</sup>: Այս ընդհանուր կանոնը սակայն չի բացառում, որ կարգապահական պատասխանատվության վարույթ հարուցվի այն դատախազի նկատմամբ, ում թերացումները գործի նախաքննության ընթացքում հանգեցրել են մեղադրյալի արդարացմանը: Որպես ընդհանուր մոտեցում դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթը, հարուցման պահից սկսած, մինչ որոշման կայացումը, պետք է համապատասխանի արդար դատաքննության իրավունքի պահանջներին<sup>6</sup>: Սա ներառում է վարույթ հարուցող և որոշում կայացնող մարմիններին և վերջիններիս գործունեությանը: Ըստ այդմ, մարմինները պետք է օրենքով նախատեսված լինեն, ինչպես նաև որոշման վերանայման հնարավորություն տան:

Ինչպես Վենետիկի հանձնաժողովը, այնպես էլ Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբը /այսուհետ՝ ԳՐԵԿՈ/ բազմիցս նշել են կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմինների ձևավորման ու գործունեության անկախության կարևորության մասին<sup>7</sup>:

Վենետիկի հանձնաժողովը ընդունել է նաև, որ կարգապահական վարույթի ընթացքում դատախազի գործառույթների կասեցումը թույլատրելի է, մինչև ժամանակ, սակայն, նման սահմանափակումը չպետք է բացասաբար ազդի վերջինիս աշխատավարձի կամ նյութական պայմանների վրա<sup>8</sup>:

Ստորև ներկայացվում են դատախազների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի առանձին կարգավորումների վերաբերյալ միջազգային չափանիշներն ու ընդունելի մոտեցումները:

---

<sup>5</sup> Venice Commission, Joint Opinion on the Draft Law on the Public Prosecutor's Office of Ukraine, CDL-AD(2013)025

<sup>6</sup> CoE Recommendation Rec(2000)19

<sup>7</sup> CDL-AD(2012)008, Opinion on Act CLXIII of 2011 on the Prosecution Service and Act CLXIV of 2011 on the Status of the Prosecutor General, Prosecutors and other Prosecution Employees and the Prosecution Career of Hungary  
GRECO 4th Evaluation Round,

<sup>8</sup> CDL-AD(2013)025, Joint Opinion on the Draft Law on the Public Prosecutor's Office of Ukraine

## Կարգապահական պատասխանատվության հիմքերն ու տեսակները

Դատախազների կարգապահական պատասխանատվության կարևորագույն էլեմենտներից մեկը պատասխանատվության հիմքերի հստակությունն ու կոնկրետությունն է, որը պետք է ամրագրված լինի օրենքով և հստակ կիրառություն ստանա գործնականում:

Այս համատեքստում ձևավորվել են որոշակի չափանիշներ, որոնք օգնում են ներպետական մակարդակում կարգապահական պատասխանատվության հիմքերի սահմանմանը:

Նման չափորոշիչներ և սկզբունքներ ձևավորվել են ինչպես Վենետիկի հանձնաժողովի կողմից, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերով:

Այսպես, կարգապահական պատասխանատվության վարույթի նախաձեռնումը չի կարող իրականացվել, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների իրականացման արդյունքում վրա հասած հակասությունների արդյունքում: Մասնավորապես, մտքի, խղճի ու կրոնի ազատության, խոսքի ազատության ու հավաքների միության իրավունքի իրականացման առնչությամբ<sup>9</sup>: Մա, սակայն, չի նշանակում, որ նշված իրավունքների իրականացումը ոչ մի դեպքում չի կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության, քանի որ որպես դատախազ գործառույթների իրականացման հետ անհամապատասխանությունը կարող է հանգեցնել նաև կարգապահական վարույթի: Ասվածը վերաբերում է, օրինակ, պետական գաղտնիք բացահայտելու դեպքերին, որի պարագայում վրա է հասնում օրենքով սահմանված այլ պատասխանատվություն եւս:

Դատախազները անձնական պատասխանատվություն կրում են միայն մասնագիտական պարտականությունները անբարեխիղճ կամ ոչ պատշաճ իրականացնելու համար: Նման դրսևորման պարագային օրինակ կարող է լինել ակոհովի ազդեցության տակ աշխատելը:

---

<sup>9</sup> Guja v Moldova, GC, no 14277/01, 12 February 2008



Վենետիկի հանձնաժողովը կարգապահական պատասխանատվության հիմքերի առնչությամբ նույնպես ընդունել է, որ վարքագծի կանոններով կամ այլ իրավական ակտերով նախատեսված պատասխանատվության հիմքերը չպետք է լայն և ոչ հստակ լինեն<sup>10</sup>: Միննույն ժամանակ, կարևոր է, որ որոշակի խախտումների ծանրության աստիճանը հստակ սահմանվի, որպեսզի կանխատեսելի և պարզ լինեն նաև վրա հասնող պատասխանատվության միջոցները<sup>11</sup>:

Մոլդովայի «Դատախազության մասին» օրենքի վերաբերյալ կարծիքում Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ լայն, ոչ հստակ չափանիշները վտանգավոր են և նույնիսկ կարող են օգտագործվել դատախազին ճնշելու համար: Նման չափանիշները թույլ են տալիս սուբյեկտիվ մեկնաբանության կիրառություն: Ըստ այդմ, անհրաժեշտ է տարբերակել մասնագիտական պարտականությունների իրական ձախողումները՝ կայացրած որոշումների որակի սուբյեկտիվ գնահատումից<sup>12</sup>:

Պատասխանատվության հիմքերի առնչությամբ ձևավորված ստանդարտ է նաև այն, որ որոշակի արարքի կատարման ենթադրության համար դատախազին պատասխանատվության ենթարկելը ընդունելի մոտեցում չէ: Ենթադրությունը պետք է կոնկրետ փաստերով ապացուցված լինի<sup>13</sup>:

## Պատասխանատվության տեսակները

Որպես ընդհանուր կանոն, ինչպես դատավորների կարգապահական պատասխանատվության պարագայում, դատախազների պարագայում եւս վրա հասնող կարգապահական պատասխանատվության միջոցը պետք է օրենքով սահմանված և համաչափ լինի թույլ տրված խախտմանը<sup>14</sup>: Համաչափությունը ավելի հեշտ է ապահովել, եթե օրենսդրությամբ առկա է վրա հասնող միջոցների սանդղակ և հերթականություն, որը հնարավոր է կիրառել յուրաքանչյուր գործի հանգամանքներից ելնելով<sup>15</sup>:

<sup>10</sup> Opinion on the draft law on the public Prosecutor's service of Moldova, CDL-AD (2008)019

<sup>11</sup> Joint Opinion on the draft Law on the Prosecution Service of the Republic of Moldova, CDL-AD, (2015)005

<sup>12</sup> CDL-AD (2008)019, Opinion on the draft law on the Public Prosecutors' service of Moldova

<sup>13</sup> Նույն տեղում

<sup>14</sup> Rodriguez Hermida v. Spain (dec.), no. 40090/98, 27 April 1999

Houdart and Vincent v. France (dec.), no. 28807/04, 6 June 2006

<sup>15</sup> CDL-AD(2015)005,

Կարգապահական խախտումների տեսակները պետք է օրենքով ամրագրված լինեն: Դատախազների դեմ բողոքները, առ այն, որ վերջիններս մասնագիտական ստանդարտներից դուրս են գործել, պետք է արդար քննության առարկա դառնան, որի ընթացքում պետք է պահպանվեն արդար դատաքննության սկզբունքները և կայացված որոշումը անկախ վերանայման հնարավորություն ստանա<sup>16</sup>:

Ներպետական օրենսդրությունը ըստ այդմ պետք է հստակ սահմանի նաև պատասխանատվության միջոցները:

Պաշտոնից ազատում կարգապահական պատասխանատվությունը պետք է վրա հասնի լուրջ խախտումների համար: Քրեական օրենսգրքով արգելված արարք կատարելու համար առնվազն 6 ամսով ազատությունից զրկվելու դեպքում դատախազը կարող է ենթակա լինել նաև պաշտոնից ազատման: Անկախ այս կամ այն երկրի ներպետական կարգավորումներից ու պրակտիկայից, սովորաբար դատախազի դատապարտումը նշանակում է նաև, որ վերջինս այլևս այդ պաշտոնի համար պատշաճ որակավորում չունի: Սա հատկապես կարևորվում է ամբողջ դատախազության համակարգի հեղինակությունը պաշտպանելու համար<sup>17</sup>:

Պետք է նաև նշել, որ քրեական պատասխանատվության ենթարկելը միանշանակ չի ենթադրում ազատությունից զրկում, սակայն դատապարտումը միանշանակ պետք է հանգեցնի պաշտոնավարման դադարեցման<sup>18</sup>: Օրենսդրությունը պետք է, սակայն, հստակ կարգավորում տա նաև քրեական գործի քննության ընթացքում դատախազի լիազորությունների կասեցման դեպքերին: Կարևոր է ամրագրել, որ նման դեպքերում կասեցվում են լիազորությունները, սակայն աշխատավարձն ու սոցիալական երաշխիքները չեն հանվում<sup>19</sup>:

Հնարավոր է ներպետական կարգավորումները այնպիսին լինեն, որ թույլ տան մինչ կասեցման ավարտը տրամադրել աշխատավարձի 50 տոկոսը, սակայն պետք է լինեն հստակ կարգավորումներ նաև այն մասով, թե երբ է մյուս 50 տոկոսի տրամադրումը վերականգնվում, ինչպիսի ընթացակարգով և չափանիշներով: Հակառակ դեպքում

---

Joint Opinion on the draft Law on the Prosecution Service of the Republic of Moldova

<sup>16</sup> UN Guidelines on the Role of Prosecutors

IAP, Standards of Professional Responsibility and Statement of the Essential Duties and Rights of Prosecutors

Council of Europe, Recommendation Rec(2000)19

<sup>17</sup> CDL- AD(2007)011, Opinion on the Draft law on the Public Prosecutors Office and the Draft law on the Council of Public Prosecutors of the former Yugoslav Republic of Macedonia

<sup>18</sup> CDL-AD(2014)008, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina

<sup>19</sup> Joint Opinion on the draft Law on the Public Prosecutor's office of Ukraine

անհստակ կարգավորումները կարող են օգտագործվել դատախազի վրա ճնշում գործադրելու համար: Ըստ այդմ, անհրաժեշտ է վերացնել կարգապահական վարույթների ընթացքում հայեցողական մոտեցման ցանկացած հնարավորություն<sup>20</sup>:

Ոչ էական/ մանր կարգապահական խախտման դեպքում 20% -ի չափով աշխատավարձից պահումները, օրինակ, Վենետիկի հանձնաժողովի կողմից համարվել է անհամաչափ<sup>21</sup>:

Ներպետական մեկ այլ համանման կարգավորման, այն է՝ չթույլատրված բացակայության համար աշխատավարձի կրճատման առնչությամբ, նույնպես Վենետիկի հանձնաժողովը դիրքորոշում է հայտնել: Մասնավորապես, Թուրքիայի ներպետական կարգավորումները կարգապահական պատասխանատվության միջոցների մեջ նախատեսել են հետևյալ տեսակները՝

- նախազգուշացում,
- աշխատավարձից պահում
- դատապարտում
- գնահատման առաջխաղացման կասեցում
- կոչման բարձրացման կասեցում
- ծառայողական վայրի փոփոխություն
- պաշտոնից ազատում

Վենետիկի հանձնաժողովը ի գիտություն է ընդունել այն հանգամանքը, որ աշխատավարձից պահումը վերաբերում է չթույլատրված բացակայություններին: Դատապարտում տեսակի մասով նշել է, որ նման խախտման համար վրա հասնող պատասխանատվությունը թույլ տրված սխալի համար վրա հասնող գրավոր ծանուցում է եւ կարող է վրա հասնել այնպիսի վարքագծի դեպքում, որը վնաս է հասցնում զբաղեցրած պաշտոնի նկատմամբ վստահությանը, անձնական նպատակներով պետական լիազորությունները օգտագործելիս, գործընկերների եւ այլ անձանց նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելիս եւ այլն: Որպեսզի նշված հիմքերով կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունները չչարաշահվեն, խորհուրդ է տրվել պատասխանատվության միջոցները այնպես կարգավորել, որպեսզի ապահովվի կատարված արարքի եւ

---

<sup>20</sup> CDL-AD(2012)008, Opinion on Act CLXII of 2011 on the Prosecution Service and Act CLXIV of 2011 on the Status of the Prosecutor General, Prosecutors and other Prosecution Employees and the Prosecution Career of Hungary

<sup>21</sup> CDL-AD(2014)042, Interim Opinion on the Draft Law on the State Prosecution Office of Montenegro

միջոցի միջեւ համաչափությունն ու միջոցները կիրառելի դարձվեն լուրջ խախտումների դեպքում<sup>22</sup>:

ՄԻԵԴ-ը իր հերթին գտել է, որ սեփականության իրավունքի խախտումների և դիրքի չարաշահման գործերով հանրային ծառայողներին կենսաթոշակային արտոնություններից զրկելը չի խախտում վերջինիս սեփականության իրավունքը, հատկապես եթե նման սահմանափակումը հանրային ծառայողին չի թողել առանց նյութական միջոցների<sup>23</sup>:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում քրեական գործի ավարտին անձի արդարացման դեպքում դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերն ու հնարավորությունները: Պրակտիկայում հնարավոր են դեպքեր, որ պատասխանատվությունից խուսափելու համար դատախազները մտնեն դատավորների հետ բանակցությունների մեջ՝ արդարացման որոշումները կանխելու համար: Նման իրավիճակներից խուսափելու համար պետք է նախատեսել, որ դատախազը մեղադրյալի արդարացման դեպքում կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն դեպքում, եթե մեղադրանքը կոպիտ անփութությամբ կամ չարամտությամբ է ներկայացրել<sup>24</sup>:

## Պատասխանատվության ենթարկող իրավասու մարմինները

Դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող մարմինը պետք է առաջին հերթին հանրային վստահություն վայելի:

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող մարմինների պարագայում ընդհանուր մոտեցումը պահանջում է, որ վերջիններիս անդամների մեծամասնությունը կամ կեսը պետք է դատախազներ լինեն<sup>25</sup>:

Այն կարող է ունենալ նույնանման կազմ, ինչ դատախազներին պաշտոնի նշանակման մարմինը: Այլ կերպ, պատասխանատվության ենթարկող մարմինը հնարավոր է կազմում ունենա նաև դատավորներ՝ նշանակված դատարաններին նախագահների կողմից: Անկախ կազմից, խորհուրդ է տրվում ձևավորել մարմին, որը

<sup>22</sup> CDL-AD(2011)004, Opinion on the Draft Law on Judges and Prosecutors of Turkey, §63

<sup>23</sup> Philippou v. Cyprus, no. 71148/10, 14 June 2016

<sup>24</sup> CDL-AD(2013)025, Joint Opinion on the Draft Law on the Public Prosecutor's Office of Ukraine

<sup>25</sup> GRECO, 4<sup>th</sup> Evaluation Round in respect of Azerbaijan (para, 128), Poland (para 224):

կունենա ի պաշտոնե անդամներ և ad hoc (ոչ մշտական), և թույլ կտա խուսափել հնարավոր միջամտություններից<sup>26</sup>:

Առանձին երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն նաև փոքր կազմով մարմիններ, որոնց անդամները Դատախազական խորհրդի մաս չեն կազմում, և որի ղեկավարը դատախազ չէ<sup>27</sup>: Նմանապես, տվյալ երկրի գլխավոր դատախազի անդամությունը կարգապահական մարմին, խրախուսելի մոտեցում չէ<sup>28</sup>:

Չնայած գոյություն ունեցող տարբեր մոդելներին, ընդհանուր կանոն է այն, որ դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմնի ղեկավարը պետք է ոչ դատախազ, ոչ դատավոր լինի: Նման դեպքերից խուսափելու համար լավագույն միջոցը դատախազական խորհուրդ ձևավորելն է<sup>29</sup>:

Պրակտիկայում հնարավոր չարաշահումները նվազեցնելու արդյունավետ միջոց է համարվում կարգապահական վարույթ հարուցող և որոշում կայացնող մարմինների տարբերակումը: Օրինակ, Թուրքիայի «Դատավորների և դատախազների մասին» օրենքի նախագծի առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը կարևորել է կարգապահական պատասխանատվության կարգավորումների հստակեցումը՝ սուբյեկտիվ որոշումները նվազեցնելու և համաչափություն ապահովելու նպատակով, այնպես, որ կարգապահական պատասխանատվությունը կիրառվի մասնագիտական պարտականությունների լուրջ խախտումների դեպքում<sup>30</sup>:

Դատախազը, ում դեմ վարույթ է հարուցվել, պետք է օգտվի ընթացակարգային բոլոր իրավունքներից, ինչը թույլ կտա արդյունավետ մասնակցել ընթացքին և պաշտպանվել: Այդ նպատակով, դատախազը կարող է հանդես գալ պաշտպանի հետ, պետք է ամբողջությամբ և մանրամասն ծանոթանա վարույթի նյութերին ու վերագրվող խախտմանը, վկայություններ ու ցուցմունքներ տա/ստանա, ստանա բոլոր փաստաթղթերի օրինակները և այլն<sup>31</sup>: Դատախազը պետք է նաև հնարավորություն ունենա բացարկ հայտնել այն անդամին, ում անկողմնակալության նկատմամբ կասկածներ կան: Կարևոր է նաև կայացրած որոշումը դատական

---

<sup>26</sup> CDL (995)07REV, Opinion on the Regulatory concept of the Constitution of the Hungarian Republic

<sup>27</sup> Interim Opinion on the Draft Law on the State Prosecution Office of Montenegro

<sup>28</sup> Final Opinion on the revised draft Law on the public Prosecution Office of Montenegro

<sup>29</sup> Opinion on Act CLXIII of 2011 on the Prosecution Service and Act CLXIV of 2011 on the Status of the Prosecutor General, Prosecutors and other Prosecution Employees and the Prosecution Career of Hungary

<sup>30</sup> CDL-AD(2011)004, Opinion on the Draft Law on Judges and Prosecutors of Turkey

<sup>31</sup> Ibid 30

բողոքարկման առարկա դարձնելու հնարավորություն տալը<sup>32</sup>: Այստեղ, սակայն, պետք է ներպետական օրենսդրությունը հստակ կարգավորում տա, որպեսզի պարզ լինի, բողոքարկումը միայն ընթացակարգային հարցերով է, թե նախատեսվում է ավելի լայն հնարավորություն և լսման հնարավորություն ընձեռում: Հատկանշական է, որ միայն ընթացակարգային վերանայումը ընդունելի տարբերակ չէ<sup>33</sup>:

Եթե վարույթը հարուցվել է դատախազական խորհրդի անդամի դեմ, ապա վերջինս չպետք է մասնակցի գործի լսմանը<sup>34</sup>:

## Վարույթի հրապարակայնությունը

Վարույթը պետք է հրապարակային իրականացվի, ինչը արդար դատաքննության երաշխիքների ընդհանուր պայմաններից ու պահանջվող չափանիշներից մեկն է: Առանձին դեպքերում, հանրության բարքերի, հանրային կարգի կամ ազգային անվտանգության, մասնավոր կյանքի կամ անչափահասների պաշտպանությամբ պայմանավորված, այն կարող է փակ լինել հանրության ու լրագրողների համար<sup>35</sup>:

Վարույթի ընթացքում դատախազը պետք է բանավոր լսումների իրավունք ունենա, ինչը թույլ կտա անձամբ դատախազին և վկաներին բացատրություններ ներկայացնել: Բանավոր լսումները առանձնակի կարևորություն ունեն, քանի որ այն հնարավորություն է տալիս վարույթն իրականացնող մարմնին անմիջականորեն գնահատել ներկայացված տվյալներն ու տեղեկությունները<sup>36</sup>:

Պատասխանատվության ենթարկող մարմնի որոշումը նույնպես պետք է հրապարակային լինի, այսինքն, բովանդակությունը հասանելի լինի յուրաքանչյուրին, ով հետաքրքրություն կցուցաբերի, բացառությամբ այն դեպքերի, երբ գաղտնիության հիմնավոր պատճառներ կան<sup>37</sup>:

---

<sup>32</sup> CDL-AD(2014)008, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina

<sup>33</sup> CDL-AD(2013)006, Opinion on the Draft amendments to the Law on the Public Prosecution of Serbia

<sup>34</sup> CDL-AD(2015)005 , Joint Opinion on the draft Law on the Prosecution Service of the Republic of Moldova

<sup>35</sup> Diennet v. France, no. 18160/91, 26 September 1995, Olujic v. Croatia, no 22330/05, 5 February 2009, Mutu and Pechstein v. Switzerland, no 40575/10, 02 October 2018

<sup>36</sup> Stojakovic v. Austria, no 30003/02, 9 November 2006, Gulmez v. Turkey, no 16330/02, 20 May 2008

<sup>37</sup> Nikolova and Vandova v. Bulgaria, no 20688/04, 17 December 2013

## Վարույթի ժամկետները

Ինչ վերաբերում է կարգապահական պատասխանատվության վարույթ հարուցելու ժամկետներին, ապա և Վենետիկի հանձնաժողովը և ԳԲԵԿՈ-ն այն կարծիքին են, որ վարույթի հարուցման համար կարճ վաղեմության ժամկետներ նախատեսելը նպատակահարմար չէ<sup>38</sup>: Այստեղ կարևոր է նշել, որ ՄԻԵԴ-ը խոշտանգումների և վատ վերաբերմունքի դրսևորումների պարագայում գործ հարուցելու վաղեմության ժամկետների սահմանափակումները չի ընդունում, եւ նմանատիպ մոտեցում վերոնշյալ արարքների քննության առնչությամբ կարելի է նախատեսել նաեւ դատախազների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ<sup>39</sup>:

Սակայն, եթե խոսքը սովորական խախտումների մասին է, ապա իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է վարույթի նախաձեռնման հստակ ժամկետներ ու ժամկետային սահմանափակումներ<sup>40</sup>:

## Կարգապահական պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ գլուխը նախատեսում է «Դատախազների խրախուսման և դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը»:

Օրենքից բխող հավելյալ կարգավորումներ սահմանվում են նաեւ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ընդունված՝ Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու վերաբերյալ կարգով<sup>41</sup> /այսուհետ՝ Կարգ/:

<sup>38</sup> 4<sup>th</sup> Evaluation Round in respect of Azerbaijan

<sup>39</sup> European Standards Concerning the Imposition of Disciplinary Liability of Prosecutors, Jeremy McBride

<sup>40</sup> Oleksandr Volkov v. Ukraine, no 21722/11, 9 January 2013

<sup>41</sup> <https://www.prosecutor.am/myfiles/files/decrees/kargapahakan-Karg.pdf>

## Կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը

Օրենքի 53-րդ հոդվածը նախատեսում է **դատախազների կարգապահական պատասխանատվության հիմքերը:**

Դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

- 1) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.
- 2) դատախազի վարքագծի կանոնները խախտելը.
- 3) աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը.
- 4) օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելը:

Օրենքով նախատեսված հիմքերը առավել բովանդակային հասկանալու համար անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին:

*Պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը*

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝

Դատախազը պարտավոր է՝

1. Տիրապետել զբաղեցրած պաշտոնում իր իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական ակտերին,
2. Կատարել Սահմանդրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները,
3. Ապահովել պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ,
4. Իր լիազորություններն իրականացնելիս ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը,
5. Պահպանել աշխատանքային կարգապահությունը, ինչպես նաև դատախազի վարքագծի կանոնները,
6. Պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանել, այդ թվում՝ պաշտոնավարումը դադարեցնելուց հետո,

---

ՀՀ Գլխավոր դատախազի 2018 թվականի հունիսի 5-ի թիվ 49 հրաման, Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգը



7. Դատախազության մասին օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում անցնել ատեստավորում և վերապատրաստում,

8. Պահպանել նույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները:

Հատկանշական է, որ 49-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները ամրագրված են ինչպես որպես կարգապահական պատասխանատվության առանձին հիմք, այնպես էլ դատախազի պարտականություն, ինչը խախտելը կրկին կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության: Ավելին, նման կարգավորումը որոշակի անհստակություն է ստեղծում առ այն, որ վարքագծի կանոնը պահպանելը ինքնին պարտականություն է եւ դրա խախտումը ինքնաբերաբար հանգեցնում է պատասխանատվության:

### *Սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները*

Դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է հանդիսանում նաեւ սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները խախտելը: Նման պահանջ հանդիսանում են մասնավորապես՝

1. Դատախազը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որնէ պաշտոն առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

2. Դատախազը չի կարող համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ ինամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, ամուսնու զավակ, ամուսնու եղբայր և ամուսնու քույր) հետ, եթե նրանց պաշտոնավարումը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության հետ:

3. Դատախազն իրավունք չունի լինելու տնտեսական ընկերությունների մասնակից կամ վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատու, եթե, բացի ընկերության ընդհանուր ժողովին մասնակցելուց, դատախազը ներգրավվում է նաև այդ կազմակերպության կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը:

4. Դատախազն իրավունք չունի՝

1) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչ, բացառությամբ այն դեպքերի, երբ նա ներկայացնում է իր ընտանիքի անդամներին կամ իր խնամակալության (հոգաբարձության) ներքո գտնվող անձանց.

2) իր պաշտոնեական դիրքն օգտագործելու կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու, ինչպես նաև իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու.

3) կազմակերպելու գործադուլներ կամ մասնակցելու դրանց.

4) հոնորար ստանալու պաշտոնեական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ էլույթների համար, բացառությամբ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից բխող հրապարակումների կամ էլույթների.

5) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական գույքը և ծառայողական տեղեկատվությունը.

6) պաշտոնեական պարտականությունների կատարման համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

**Օրենսդիրը կարգավորում է սովել նաև *դատախազի վարքագծի կանոններին*:**

Այսպես, օրենքի 72-րդ հոդվածը սահմանում է դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները: Դրանք են՝

1) ցանկացած պայմաններում ու իրավիճակում իր գործունեությամբ, գործնական, մասնագիտական և բարոյական հատկանիշներով զերծ մնալ դատախազության բարձր հեղինակությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող, դատախազության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող կամ դատախազության անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուց, այդ թվում՝ հօգուտ որևէ անձի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված անձնական երաշխավորություն տալուց.

2) ցանկացած պայմաններում ու իրավիճակում խուսափել դատախազի կոչմանը անհարիր այնպիսի գործնական, մասնագիտական կամ բարոյական կապերից կամ

այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որոնք կարող են արատավորել դատախազի հեղինակությունը, բարի համբավը, պատիվը և արժանապատվությունը.

3) բարձր պահել դատախազության հեղինակությունը, անձնական վարվեցողությամբ և գործունեությամբ հարգանք ու վստահություն ներշնչել դատախազության և իր անձի նկատմամբ.

4) դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, ձեռնպահ մնալ որևէ վարքագիծ դրսևորելուց, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել, ինչպես նաև չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության նկատմամբ.

5) չանդամակցել այնպիսի մասնագիտական կամ հասարակական կազմակերպությունների, որոնց գործունեությունը կապված է էթնիկական, ազգային, դավանանքի կամ ֆիզիկական արատների խտրականության հետ.

6) լինել ինքնուրույն և անաչառ, անկախ լինել օրենսդիր և գործադիր իշխանությունների և այլ պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և քաղաքական կազմակերպությունների, լրատվության միջոցների, մասնավոր շահերի, հասարակական կարծիքի և այլ կողմնակի ազդեցություններից, ճնշումներից, սպառնալիքներից և այլ միջամտությունից, ազատ լինել քննադատվելու մտավախությունից.

7) զերծ մնալ դատախազական ակտերը և իր գործընկերների գործողությունները, մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց,

8) իր համար ընդունել այնպիսի սահմանափակումներ, որոնք կապահովեն իր հավասարակշռվածության ու անաչառության հասարակական ընկալումը,

9) լինել օրինապահ, արդարամիտ, համբերատար, կարգապահ, զուսպ, կշռադատված, բարեկիրթ, սկզբունքային, անկողմնակալ ու հաստատակամ, ուրիշի կարծիքը լսող, հարգող և այլակարծությունը հանդուրժող, այլ անձանց իրավունքների սահմանափակմանն ուղղված գործողություններ իրականացնելիս դրսևորել ծայրահեղ ողջամտություն և բարեկրթություն.

10) լինել անհանդուրժողական գործընկերների վարքագծի կանոնների թույլ տված խախտումների և ոչ բարոյական վարքագծի նկատմամբ.

11) համապատասխան մարմիններին անհապաղ տեղեկացնել մարդկանց կյանքին, առողջությանը և շրջակա միջավայրի անվտանգությանն սպառնացող վտանգի մասին, միջոցներ ձեռնարկել դրանց ժամանակին կանխարգելելու և հետևանքները վերացնելու նպատակով, պաշտպանել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, աջակցել դրանց իրականացմանը.

12) իրեն տրամադրված ծառայողական հրազենը հասարակական վայրերում ցուցադրաբար չկրել:

Վարքագծի կանոնների մեջ նկատելի են սահմանումներ, որոնք բավարար հստակություն չունեն, ինչը պրակտիկայում կարող է տարբերակված և տարբեր մեկնաբանությունների տեղիք տալ: *Սյդպիսի սահմանումներից են սահմանափակումների ընդունումը, ոչ բարոյական վարքի նկատմամբ անհանդուրժողականությունը, դատախազության հեղինակությունը բարձր պահելուն ուղղված պահանջները եւ այլն:*

Ձուգահեռաբար օրենքով նախատեսված են նաև դատախազի վարքագծի կանոնները պաշտոնեական հարաբերություններում:

Մասնավորապես, դատախազը պարտավոր է՝

1) գործել *Մահմանադրությանը, սահմանադրական օրենքներին, օրենքներին համապատասխան,*

2) *պահպանել աստիճանակարգված ենթակայության սկզբունքը, որը չի խոչընդոտում վերադաս կամ անմիջական վերադաս դատախազին զերծ մնալու ստորադաս դատախազի նկատմամբ այնպիսի վարքագիծ դրսևորելուց կամ խոսքեր արտահայտելուց, որը կարող է արատավորել դատախազի պատիվն ու արժանապատվությունը, վարկաբեկել նրա հեղինակությունը.*

3) *լինել անկախ և անաչառ.*

4) *դրսևորել անհրաժեշտ հետևողականություն՝ օրենքով նախատեսված սահմանափակումները պահպանելիս.*

5) *ունենալ ինքնուրույն համոզմունք և դատախազական ակտերը կայացնել ինքնուրույն, որը չի խոչընդոտում իրավական հարցերի շուրջ դատախազ գործընկերներից խորհուրդ ստանալը.*

6) *բարեխղճորեն կատարել իր պաշտոնական պարտականությունները, առաջնահերթության կարգով կատարել իր լիազորությունները՝ օրենքով դատախազին թույլատրված գործունեության այլ տեսակների նկատմամբ.*

7) *ապահովել իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունը ու արհեստավարժությունը, միջոցներ ձեռնարկել ներպետական ու միջազգային իրավունքի վերաբերյալ իր մասնագիտական գիտելիքների հարստացման, հմտությունների և անձնական հատկանիշների շարունակական կատարելագործման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում մասնագիտական աջակցություն ցույց տալ գործընկերներին.*

8) *դեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներով՝ միջոցներ ձեռնարկել օրինականությունն ամրապնդելու, իրավախախտումների*

պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները բացահայտելու և վերացնելու համար.

9) դատական նիստերին մասնակցել պատշաճ համազգեստով, ցանկացած պայմաններում ու իրավիճակում լինել զուսպ, զգացմունքներում՝ կայուն, խուսափել դատախազի կոչմանն անհարիր այնպիսի վարքագիծ դրսևորելուց կամ խոսքեր արտահայտելուց, որոնք կարող են արատավորել դատախազի ու դատախազության հեղինակությունն ու բարի համբավը.

10) իր պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, խտրականություն դրսևորելուց կամ նման տպավորություն ստեղծելուց, գործել այնպես, որ նրա անաչառության և անկողմնակալության նկատմամբ անհարկի կասկած չհարուցվի, չառաջնորդվել ենթադրություններով, հույզերով, անձնական վերաբերմունքով և այլ կողմնակի ազդեցությամբ, որը չի խոչընդոտում դատախազին ազատորեն արտահայտելու իր կարծիքը ծառայողական հարցերին առնչվող լուծումների վերաբերյալ.

11) ողջամտության սահմաններում իրեն դրսևորել այնպես, որ նվազագույնի հասցվեն վարույթից կամ գործի քննությունից հեռացման (ինքնաբացարկի) անհրաժեշտություն առաջացնող դեպքերը.

12) այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկատվությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

13) համբերատար, արժանապատիվ, հարգալից և բարեկիրթ վերաբերմունք ցուցաբերել դատավարության մասնակիցների, գործընկերների և բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատախազը շփվում է ի պաշտոնե.

14) պաշտոնեական պարտականությունների իրականացման ընթացքում թույլ տրված խախտումների ու թերությունների բացահայտմանն ու անաչառ քննադատությանը վերաբերվել ըմբռնումով և միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու համար.

15) գործընկերների հետ հարաբերություններում նպաստել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը, նրանց նկատմամբ լինել հարգալից, հավասարակշռված, հարգել նրանց կարծիքը, պատրաստակամություն դրսևորել օգնելու և աջակցելու իր գործընկերներին, անհրավաչափորեն չմիջամտել գործընկերների պաշտոնեական լիազորությունների իրականացմանը, որը չի խոչընդոտում դատախազին ազատորեն արտահայտելու իր կարծիքը ծառայողական հարցերին առնչվող լուծումների վերաբերյալ:

Օրենքը առանձին կարգավորում է տվել նաև դատախազի վարքագծի կանոններին արտապաշտոնեական հարաբերություններում: Այսպես, դատախազը պարտավոր է՝

1) չօգտագործել դատախազի պաշտոնի հեղինակությունը ի շահ իրեն կամ այլ անձի.

2) թույլ չտալ շահերի բախում, որ իր ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունները որևէ կերպ ազդեն ի պաշտոնե իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա.

3) խուսափել իր կամ դատախազության հեղինակությունը վարկաբեկող, պատիվն ու արժանապատվությունն արատավորող, անաչառության վրա ազդող, որոշակի անձանցից նյութական և այլ կախվածության մեջ դնող կապերից.

4) զերծ մնալ գործի վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցների հետ անհարկի շփումներից, ցանկացած պայմաններում ու իրավիճակում լինել զուսպ, զգացմունքներում՝ կայուն, խուսափել դատախազի կոչմանն անհարիր այնպիսի վարքագիծ դրսևորելուց կամ խոսքեր արտահայտելուց, որոնք կարող են արատավորել դատախազի ու դատախազության հեղինակությունն ու բարի համբավը:

Կարող ենք նկատել, որ արտապաշտոնեական հարաբերություններում պահանջվող կանոնները իրենց բովանդակությամբ մասամբ ներառված են վարքագծի ընդհանուր կանոնների մեջ:

Օրենքով նախատեսված վերոնշյալ վարքագծի կանոններին զուգահեռ օրենսդիրը հնարավորություն է տալիս նաև ընդունել այս կանոններից բխող պահանջներ: Վարքագծի կանոններից բխող պահանջները կարող են ընդունվել գլխավոր դատախազի հրամանով: Որպես օրինակ կարելի է մատնանշել ՀՀ Գլխավոր դատախազի 2018թ ապրիլի 10-ի N27 հրամանը, որով սահմանվել են դատախազի կողմից իր պաշտոնեական և արտապաշտոնեական գործունեության ընթացքում գործող պահանջներից բխող պահանջներ<sup>42</sup>:

Ինչ վերաբերվում է որպես կարգապահական պատասխանատվության առանձին հիմք նախատեսված **աշխատանքային ներքին կարգապահական կանոններին**, ապա վերջիններս օրենքով ամրագրում չեն ստացել: Նման կանոններ հասանելի չեն նաև ՀՀ դատախազության պաշտոնական կայքում: ՀՀ Դատախազությունից այս առնչությամբ տեղեկացրել են, որ ներքին կարգապահական կանոնները օրենսդրական ամրագրում չունեն, սակայն սահմանված են ՀՀ Գլխավոր դատախազի 2012 թվականի մարտի 2-ի թիվ 5 հրամանով<sup>43</sup>:

<sup>42</sup> <https://www.prosecutor.am/myfiles/files/decrees/Varqagci-kanonnery.pdf>

Դատախազի վարքագծի կանոններից բխող պահանջները

<sup>43</sup> ՀՀ Դատախազության կողմից կազմակերպության ուսումնասիրության վերաբերյալ ներկայացված նկատառումներ

Օրենսդիրը ըստ էության սահմանել է բավականին լայն հիմքեր կարգապահական պատասխանատվության վարույթ հարուցելու համար: Ընդ որում, նախատեսված հիմքերով սահմանված պահանջները երբեմն կրկնվում, երբեմն փոխլրացնում են միմյանց: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում սակայն նախատեսված հիմքերի հստակությունն ու պրակտիկայում կիրառման հնարավորություններն ու արդյունավետությունը:

Ինչպես կարելի է նկատել վերը ներկայացված կարգավորումներից, առավել լայն կարգավորում ստացել են դատախազի վարքագծի կանոնները՝ ներկայացված մի քանի տեսակներով: Նման պահանջները, ինչ խոսք, դրական կարող են գնահատվել դատախազի վարքագիծը կանոնակարգելու համար: Այլ հարց է սակայն, թե ինչպես են դրանք պրակտիկայում մեկնաբանվում, տարընկալման ու տարամեկնաբանության ինչ ռիսկեր են պարունակում, ինչ չափանիշներով են դրվում կարգապահական վարույթների հիմքում և ինչքանով են կանխատեսելի դատախազների համար:

## **Կարգապահական վարույթ հարուցելու իրավասու մարմինները**

Օրենքի 56-րդ հոդվածի համաձայն կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունի գլխավոր դատախազը՝

- Իր նախաձեռնությամբ կամ,
- Դատախազների միջնորդությունների հիման վրա,
- Ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա
- Պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով գլխավոր դատախազին դիմելու մասին դատարանի սանկցիայի հիման վրա:

Նույն կարգավորումը նախատեսված է նաեւ վերոնշյալ Կարգի 4-րդ կետի 5-րդ մասով:

Օրենքի 56-րդ հոդվածի կարգավորման երկրորդ կետի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդություն գլխավոր դատախազին ներկայացնելու իրավունք ունեն՝

1) գլխավոր դատախազի տեղակալը՝ իր համակարգման ոլորտում գտնվող դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

2) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը՝ տվյալ ստորաբաժանման դատախազների կատարած կարգապահական խախտումների համար, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված առանձին դեպքերում.

3) զինվորական դատախազը՝ զինվորական կենտրոնական դատախազության և կայազորների զինվորական դատախազության դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

4) Երևան քաղաքի դատախազը՝ Երևան քաղաքի դատախազության դատախազների, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

5) Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը՝ տվյալ վարչական շրջանի դատախազության դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

6) մարզի դատախազը՝ տվյալ մարզի դատախազության դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

7) կայազորի զինվորական դատախազը՝ կայազորի զինվորական դատախազության դատախազների կատարած կարգապահական խախտումների համար: Օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Էթիկայի հանձնաժողովը հասցեագրված՝ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հաղորդումների հիման վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի, դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունի նաև Էթիկայի հանձնաժողովը նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

Կարգի 4-րդ կետի 6-րդ մասը նույնպես սահմանում է, որ Դատախազի նկատմամբ կարգապահական խախտման փաստի առթիվ կարգապահական *վարույթ հարուցում է գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը*՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ՝



1. Ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների հիման վրա,

2. Ջանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա

Օրենքի և Կարգի վերոնշյալ կարգավորումները թույլ են տալիս նշել, որ դատախազի նկատմամբ կարգապահական խախտման փաստի առթիվ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն գլխավոր դատախազը և էթիկայի հանձնաժողովը:

Օրենքի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամից: Վերջինիս կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, երեք իրավաբան-գիտնական և գլխավոր դատախազի, գլխավոր դատախազի՝ էթիկայի հանձնաժողովի անդամ չհանդիսացող տեղակալների, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, Երևան քաղաքի դատախազի, մարզերի դատախազների, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և կայագրների զինվորական դատախազների կողմից ձայների մեծամասնությամբ ընտրված երեք դատախազ: Էթիկայի հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:

Կարգը նախատեսում է նաև, որ գլխավոր դատախազին ուղղված միջնորդությունները, ինչպես նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումները, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներն ինքնին կարգապահական վարույթ հարուցելու հիմք չեն: Այսինքն, ինչպես գլխավոր դատախազին, այնպես էլ էթիկայի հանձնաժողովին տրված է հայեցողություն վարույթ հարուցելու հարցում: Չնայած Կարգը սահմանում է նաև, որ «եթե . . . նշված առիթներում առկա փաստական տվյալները բավարար չեն կարգապահական վարույթ հարուցելու համար և պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություններ, ապա գլխավոր դատախազի հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությունում կատարվում են ուսումնասիրություններ, որի արդյունքները զեկուցագրերով ներկայացվում են գլխավոր դատախազին» այնուհանդերձ, կրկին վարույթ հարուցելու հայեցողությունը թողնված է գլխավոր դատախազին:

Նմանապես, Կարգը նախատեսում է նաև, որ «եթե էթիկայի հանձնաժողովի համար վարույթ հարուցելու նախատեսված առիթներում առկա փաստական տվյալները

բավարար չեն կարգապահական վարույթ հարուցելու համար և պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություններ, ապա գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի նախագահը, գլխավոր դատախազի համաձայնությամբ, ստացված հաղորդումներն ու հրապարակումները ուսումնասիրություն կատարելու համար ուղարկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (հետայսու՝ Վարչություն): Ուսումնասիրության արդյունքները զեկուցագրով ներկայացվում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը: *Էթիկայի հանձնաժողովը քննարկում է եզրակացությունը և կայացնում համապատասխան որոշում»:*

Խոսքը վերաբերում է վարույթ հարուցելու հարցին: Նման կարգավորմամբ կարելի է նկատել մի կողմից գլխավոր դատախազի համաձայնության պայմանը, մյուս կողմից էթիկայի հանձնաժողովին տրված հայեցողությունը, ինչը գործընթացը լրացուցիչ բարդեցնում է:

## **Կարգապահական վարույթի իրականացումը**

Օրենքի 56-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ իր կամ էթիկայի հանձնաժողովի՝ կարգապահական վարույթ հարուցելու որոշման հիման վրա գլխավոր դատախազը *եռօրյա ժամկետում ստեղծում է դատախազներից կազմված կարգապահական վարույթ իրականացնող հանձնախումբ կամ դրա իրականացումը հանձնարարում է մեկ դատախազի:*

Գլխավոր դատախազի հանձնարարությամբ հանձնախմբի կամ դատախազի կողմից իրականացվում է կարգապահական վարույթ, սակայն ոչ Օրենքով, ոչ Կարգով լրացուցիչ չեն հստակեցվում այն դեպքերը, երբ կարգապահական վարույթի իրականացումը կարող է հանձնարարվել մեկ դատախազի: Չի հստակեցվում նաև այն հարցը, թե ինչ չափանիշների հիման վրա են դատախազները ներգրավվում հանձնախմբում:

Իրականացվող կարգապահական վարույթի ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքներն են՝

1. Կարգապահական խախտման դեպքը և կատարման հանգամանքները /կատարման ժամանակը, եղանակը և այլն/,
2. Կարգապահական խախտման կազմի տարրերը,

3. Կարգապահական խախտում ծնող պատճառները և դրանց նպաստող պայմանները

Կարգապահական վարույթ հարուցելու որոշման հիման վրա՝ հանձնախմբի կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազի միջոցով իրականացվում է կարգապահական վարույթ: Վերջինիս հարուցման որոշման մասին դատախազին հաղորդվում է այն կայացնելու օրվանից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում:

Կարգը սահմանում է վարույթ իրականացնող հանձնախմբի կամ հանձնարարություն ստացած դատախազի լիազորությունները՝

1. Սահմանված ժամկետում անցկացնել լրիվ, բազմակողմանի եւ օբյեկտիվ քննություն՝ կատարված գործողություններին տալով համապատասխան փաստաթղթային ձեւակերպում՝ եզրակացություն,

2. Բացատրություններ վերցնել այն դատախազներից, որոնք կարող են կարգապահական խախտման հանգամանքների առնչությամբ անհրաժեշտ տեղեկատվություն տալ,

3. Առաջարկել բացատրություններ տալ այն անձանց, որոնք կարող են կարգապահական խախտման հանգամանքների առնչությամբ անհրաժեշտ տեղեկատվություն տալ,

4. Ուսումնասիրել խախտման փաստին առնչվող քրեական, քաղաքացիական, կարգապահական կամ վարչական վարույթի նյութերն ու դատախազության տնօրինության տակ գտնվող այլ փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում դրանց կրկնօրինակները կցել վարույթի նյութերին,

5. Կարգապահական խախտման փաստի առնչությամբ հարցումներ անել համապատասխան իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին այլ մարմիններին,

6. Միջնորդություն ներկայացնել գլխավոր դատախազին օրենքով նախատեսված կարգով դատախազի լիազորությունները կասեցնելու վերաբերյալ՝ մինչև տվյալ վարույթի վերջնական որոշման ընդունումը,

7. Մինչև կարգապահական վարույթի ավարտը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող դատախազին ծանոթացնել կարգապահական վարույթի նյութերին, ներառյալ՝ եզրակացությանը, բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տվյալների,

8. Իր իրավասության սահմաններում լուծել կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող դատախազի միջնորդությունները:

Կարգի համաձայն՝ հանձնախումբը կամ կարգապահական վարույթ իրականացնող հանձնարարություն ստացած դատախազը կարող է գլխավոր դատախազի կողմից օժտվել օրենսդրության պահանջներին չհակասող այլ լիազորություններով: Լրացուցիչ կարգավորում և հստակեցում, թե խոսքը ինչպիսի լիազորությունների մասին է գնում և որ դեպքերում նման լիազորություններ կարող են վերապահվել, կրկին չի նախատեսվում:

Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հիմքով դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդում կամ միջնորդություն ստանալու դեպքում գլխավոր դատախազը, իսկ նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում էթիկայի հանձնաժողովը եռօրյա ժամկետում հաղորդումը կամ միջնորդությունն ուղարկում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Եթե դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նախաձեռնողը գլխավոր դատախազն է, ապա նա եռօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում տեղեկատվություն դատախազի կողմից օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու փաստի մասին:

Իրականացված վարույթի ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ կազմվում է *համապատասխան արձանագրություն*: Կարգը սահմանում է, որ վարույթի հիմքում չեն կարող դրվել օրենքի և Կարգի խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալներ:

Վարույթի ավարտին կարգապահական վարույթ իրականացնող հանձնախումբը կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազը կարգապահական վարույթը դադարելու վերաբերյալ կազմում է եզրակացություն, որը ներկայացվում է գլխավոր դատախազին:

Այն դեպքում, երբ կարգապահական վարույթի ընթացքում հանցագործության հատկանիշներ են հայտնաբերվում, ապա նյութերը համապատասխան զեկուցագրով ներկայացվում են գլխավոր դատախազին:

Գլխավոր դատախազը վարույթի ավարտի վերաբերյալ զեկուցագիրը և նյութերը ստանալուց հետո, այն հանձնում է հանձնախմբին կամ յոթնօրյա ժամկետում կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, որը կարող է լինել նաև պաշտոնից ազատում կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն, ներկայացնում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը: Եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը 7 օրվա ժամկետում էթիկայի հանձնաժողովին չի ներկայացվում, ապա կարգապահական վարույթը դադարում է:

Կարգավորումները սակայն չեն նախատեսում այն դեպքերը, երբ, օրինակ, 7 օրյա ժամկեր բաց է թողնվում եւ վարույթը դադարում է հանձնախմբի չհավաքվելու եւ սահմանված գործողությունները չկատարելու պատճառով:

## **Էթիկայի հանձնաժողովի դերն ու իրավասությունների շրջանակը**

Կարգապահական պատասխանատվության հարցում էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգը, դերն ու գործառույթները սահմանված են օրենքի մեկ հոդվածով: Մասնավորապես, հոդված 57-ը նախատեսում է հանձնաժողովի գործունեության կարգը: Հավելյալ կարգավորումները նախատեսվում են Կարգով:

Օրենքը էթիկայի հանձնաժողովին վերապահել է դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու **հարցը քննարկելու** իրավասություն: Միննույն ժամանակ, ինչպես տեսանք վերը ներկայացված կարգավորումներից, կարգապահական խախտման փաստի **առթիվ էթիկայի հանձնաժողովը կարող է նաև կարգապահական վարույթ հարուցել:**

Օրենքի համաձայն՝ կարգապահական վարույթի ավարտից հետո՝ յոթնօրյա ժամկետում, գլխավոր դատախազը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, որը կարող է ներառել օրենքով սահմանված կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն, ներկայացնում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը:

Ընդ որում, էթիկայի հանձնաժողովի այն դատախազ անդամը, որի վերաբերյալ հարցը ներկայացվել է հանձնաժողովի քննարկմանը, չի մասնակցում այդ քննարկմանը: Եթե այդ անդամը էթիկայի հանձնաժողովի նախագահն է, ապա էթիկայի հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ հանձնաժողովի անդամներից ընտրում է էթիկայի հանձնաժողովի ժամանակավոր նախագահ:

Ինչ վերաբերում է հարցի բուն քննարկմանը, ապա էթիկայի հանձնաժողովը հարցը քննում է դրա համար հրավիրված նիստում և գաղտնի քվեարկությամբ որոշում կարգապահական խախտման փաստի առկայությունը, կատարված կարգապահական խախտման մեջ դատախազի մեղավորության հարցը, իսկ օրենքով սահմանված կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն ներկայացրած

լինելու դեպքում նաև պաշտոնից ազատում կարգապահական տույժ նշանակելու հնարավորության հարցը:

Համաձայն կարգավորումների՝ էթիկայի հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ կարգապահական վարույթի արդյունքներով ձեռք բերված տվյալները գնահատում է իր ներքին համոզմամբ՝ հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմամբ:

Ոչ օրենքը, ոչ Կարգը սակայն լրացուցիչ չեն սահմանում, թե կոնկրետ ինչ չափանիշների հիման վրա և ինչպես է ձևավորվում ներքին համոզմունքը, ինչով պետք է անդամները առաջնորդվեն որոշում կայացնելիս:

Ներկայացված հարցի քննարկման արդյունքում էթիկայի հանձնաժողովը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) կարգապահական խախտման փաստի բացակայության մասին,
- 2) կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության մասին,
- 3) կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության բացակայության մասին:

## **Կարգապահական տույժի տեսակները և դրանց նշանակումը**

Ինչպես արդեն նշվեց, վարույթի ավարտին կարգապահական վարույթ իրականացնող հանձնախումբը կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազը կարգապահական վարույթը դադարելու վերաբերյալ կազմում է եզրակացություն, որը ներկայացվում է գլխավոր դատախազին: Ավարտի ու արդյունքների հիման վրա գլխավոր դատախազի կողմից որոշվում է նաև կարգապահական կոնկրետ տույժի տեսակը:

Օրենքի 54-րդ հոդվածը ըստ այդմ նախատեսում է դատախազի նկատմամբ գլխավոր դատախազի կողմից նշանակվող կարգապահական տույժերի տեսակները: Մասնավորապես, դատախազի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ կարգապահական տույժերը՝

1. Նկատողություն

2. Խիստ նկատողություն
3. Դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով
4. Պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով
5. Պաշտոնից ազատում:

Դասային աստիճանից իջեցում կարգապահական տույժը բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների նկատմամբ նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ գլխավոր դատախազի ներկայացմամբ:

Պաշտոնի իջեցում մեկ աստիճանով տույժը չի կարող կիրառվել առաջին անգամ դատախազի պաշտոնն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման կազմում զբաղեցնող անձանց նկատմամբ:

Պաշտոնից ազատում կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն ներկայացրած լինելու դեպքում, հանձնաժողովը որոշում է կայացնում բացասական կամ դրական եզրակացություն տալ այդ կարգապահական տույժը նշանակելու վերաբերյալ:

Կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության մասին որոշում կայացնելու, ինչպես նաև պաշտոնից ազատում կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ դրական եզրակացություն ներկայացնելու դեպքում, գլխավոր դատախազը եռօրյա ժամկետում նշանակում է օրենքով սահմանված կարգապահական տույժի տեսակներից մեկը:

Կարգապահական խախտման առկայության և դատախազի մեղավորության մասին որոշում կայացնելու և պաշտոնից ազատում կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ բացասական եզրակացություն ներկայացնելու դեպքում, գլխավոր դատախազը կարող է նշանակել պաշտոնի իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժի տեսակը<sup>44</sup>:

Գլխավոր դատախազի կողմից «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ կիրառելու հնարավորության հարց առաջադրելու դեպքում, հանձնաժողովը որոշում է նաև այդպիսի տույժ կիրառելու հնարավորության հարցը:

Գլխավոր դատախազը Օրենքով սահմանված դատախազի սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու հիմքով տույժ նշանակում է

---

<sup>44</sup> ՀՀ Օրենքը Դատախազության մասին, հոդված 57

միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած եզրակացության հիման վար՝ եզրակացությունն ստանալու պահից եռօրյա ժամկետում:

Օրենքը նախատեսում է տույժերի նշանակման հարցում համաչափության սկզբունքը, այն է՝ տույժը պետք է համաչափ լինի կատարված կարգապահական խախտման ծանրությանը և մեղավորության աստիճանին:

Մեկ կարգապահական խախտման համար դատախազի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ: Մեկ կարգապահական վարույթի շրջանակներում, անգամ եթե նույն դատախազը կատարել է մի քանի կարգապահական խախտում, դատախազի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

Կարգապահական տույժի ենթարկված դատախազը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված վարչական կամ քրեական պատասխանատվությունից:

«Պաշտոնից ազատում» կարգապահական տույժը կարող է նշանակվել դատախազի այնպիսի արարք կատարելու դեպքում, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը կամ անհամատեղելի է դատախազի պաշտոնի հետ: «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի և դատախազների նկատմամբ կարող է կիրառվել նաև գլխավոր դատախազի նախաձեռնությամբ կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա, որով հիմնավորվում է նշված անձի կողմից տևական ժամանակ իր գործառույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի հետևանքով ստորաբաժանման առջև դրված նպատակները և խնդիրներն արդյունավետորեն չեն իրականացվել:

Կարգի համաձայն կարգապահական տույժ նշանակելու լիազորություն ունեցող անձի որոշմամբ կարգապահական խախտում կատարած դատախազը կարող է ազատվել կարգապահական տույժից, եթե նման արարք կատարել է առաջին անգամ, անկեղծորեն զղջացել է եւ կամավոր հատուցել իրավախախտմամբ պատճառված վնասը:

Առերեւույթ կարգապահական խախտում կատարելու մեջ կասկածվող դատախազը մինչեւ նրա վերաբերյալ կատարվող կարգապահական վարույթի ավարտը չի կարող տեղափոխվել, նշանակվել նոր պաշտոնի, ստանալ հերթական դասային աստիճանը, իր նախաձեռնությամբ ազատվել դատախազությունում պաշտոնից:



## Դատախազի իրավունքներն ու պարտականությունները վարույթի ընթացքում

Կարգապահական խախտում թույլ տալու մեջ մեղադրվող դատախազի իրավունքների ապահովման համար Կարգը նախատեսում է, որ վերջինս իրավունք ունի ներկա գտնվել և բացատրություն տալ իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ: Իսկ Հանձնաժողովի նախագահի պահանջով կամ հանձնաժողովի համապատասխան որոշման առկայության դեպքում դատախազը պարտավոր է ներկա գտնվել նիստին:

Օրենքը նախատեսում է նաև դատախազի կոնկրետ իրավունքներն ու պարտականությունները վարույթի ընթացքում: Համաձայն կարգավորումների՝ կարգապահական վարույթը հարուցելու և իրականացնելու, այդ թվում՝ օրենքով սահմանված իրավունքների և պարտականությունների իրականացման կարգը սահմանում է գլխավոր դատախազը:

Այսինքն, հստակ ընթացակարգ «Դատախազության մասին» օրենքով նախատեսված չէ, եւ այն թողված է գլխավոր դատախազի որոշմանը: Վերջինս ամրագրված է քննարկվող Կարգով, որը առանձին դրույթներ պարունակում է նաև կարգապահական վարույթի իրականացման վերաբերյալ:

Ինչ վերաբերում է նախատեսված իրավունքների շրջանակին, ապա՝

Առերևույթ կարգապահական խախտման մեջ կասկածվող դատախազն ունի՝

- 1) իրավունք՝ ծանոթանալու իր իրավունքներին և պարտականություններին.
- 2) իրավունք՝ իմանալու, թե ինչ կարգապահական խախտում է իրեն վերագրվում, պարզաբանում տալու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ.
- 3) իրավունք՝ միջնորդություններ ներկայացնելու կարգապահական վարույթի ընթացքում առանձին գործողություններ կատարելու համար, ինչպես նաև ներկայացնելու նյութեր, իր պարզաբանումները հիմնավորող փաստական տվյալներ՝ կարգապահական վարույթի նյութերին կցելու համար.
- 4) իրավունք՝ բացարկ հայտնելու կարգապահական վարույթ իրականացնող անձին, եթե կան հիմքեր ենթադրելու, որ կարգապահական վարույթ իրականացնող անձն ուղղակի կամ անուղղակի շահագրգռված է կարգապահական վարույթի ելքով: Բացարկը լուծում է գլխավոր դատախազը.

5) իրավունք՝ ծանոթանալու կարգապահական վարույթի նյութերին, բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների, եթե չունի դրանց առնչվելու թույլտվություն, ինչպես նաև կարգապահական վարույթի ընթացքի, նյութերի վերաբերյալ ներկայացնելու առաջարկություններ, դիտողություններ և միջնորդություններ:

6) օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

Ինչ վերաբերում է պարտականություններին, ապա Օրենքը սահմանում է, որ դատախազը պարտավոր է կարգապահական վարույթն իրականացնողի պահանջով ներկայացնել կարգապահական վարույթի իրականացման համար անհրաժեշտ իր մոտ եղած փաստաթղթեր, առարկաներ և նյութեր: Կարգը հավելյալ սահմանում է, որ առերևույթ կարգապահական խախտման մեջ կասկածվող դատախազը պարտավոր է՝

1. Հանձնախմբի ղեկավարի կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազի պահանջով ներկայանալ կարգապահական վարույթի իրականացման վայր և տալ գրավոր բացատրություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև լրացուցիչ բացատրություն, մասնակցել այլ անհրաժեշտ գործողությունների և ստորագրությամբ հաստատել դրանց կապակցությամբ կազմված արձանագրության ճշտությունը, իսկ ստորագրելուց հրաժարվելու դեպքում՝ ներկայացնել գրավոր պատճառաբանություն,

2. Հանձնախմբի ղեկավարի կամ կարգապահական վարույթ իրականացնելու հանձնարարություն ստացած դատախազի պահանջով ներկայացնել իր մոտ եղած փաստաթղթերը, առարկաններն ու նյութերը:

## **Կարգապահական վարույթի ժամկետները**

Օրենքի համաձայն՝ կարգապահական վարույթը հարուցվում է կարգապահական խախտում հայտնաբերվելու օրվանից 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այն կատարելու օրվանից 12 ամսվա ընթացքում:

Կարգապահական վարույթի տևողությունը չի կարող գերազանցել 21 օրը՝ սկսած կարգապահական վարույթ հարուցելու օրվանից, բացառությամբ կարգապահական ստուգումների, դատախազի հարգելի պատճառով բացակայության, հիվանդության, գործուղման դեպքերի: Այս դեպքում կարգապահական վարույթի տևողությունը վարույթ հարուցած անձը կարող է երկարաձգել կարգապահական ստուգումների,

հիվանդության, գործուղման կամ դատախազի հարգելի պատճառով բացակայության ժամանակահատվածով:

Էթիկայի Հանձնաժողովում քննարկումը կատարվում է կարգապահական վարույթի նյութերը հանձնելու օրվանից 1 շաբաթվա ընթացքում:

## **Կարգապահական վարույթի հրապարակայնությունը**

Վարույթի հրապարակայնության վերաբերյալ արդեն իսկ ներկայացված միջազգային ստանդարտները ցույց են տալիս, որ հրապարակայնության սկզբունքի պահպանումը, կարևոր է ոչ միայն դատախազի համար, ում դեմ այն հարուցված է, այլ լայն հանրության իրազեկվածության տեսանկյունից, ինչը վերաբերում է ոչ միայն ընթացքին, այլ կայացված վերջնական որոշմանը:

Այս առնչությամբ ՀՀ ներպետական կարգավորումներն ու պրակտիկան առանձնակի ուշադրության կարիք ունեն:

Կարգապահական պատասխանատվության վերաբերյալ օրենսդրական կարգավորումները չեն նախատեսում ոչ վարույթի որևէ փուլի հրապարակայնություն, ոչ էլ կայացված որոշման հրապարակում դատախազության պաշտոնական կայքում, ինչը կարգապահական պատասխանատվության ինստիտուտի գործնական կիրառելիության մասին բովանդակային պատկերացում կազմելու, հանրային թափանցիկության ու հաշվետվողականության տեսանկյունից լուրջ բացթողում է: Ավելին, այն հակասում է միջազգային կարգավորումներին:

Սույն ուսումնասիրության շրջանակներում կարգապահական պատասխանատվության վերաբերյալ կայացված որոշումներին բովանդակային հասանելիություն չի եղել: Գրավոր հարցման արդյունքում հնարավոր է եղել ստանալ ընդհանրական և թվային տեղեկություններ վերջին 2016-2020թթ. և 2021 թվականի առաջին կիսամյակում հարուցված վարույթների, հիմքերի ու կայացված որոշումների վերաբերյալ: Սակայն, չունենալով հասանելիություն ամբողջական որոշումներին, հնարավոր չի եղել դուրս բերել օրենսդրական կարգավորումների ու դրանց գործնական կիրառելիության, հիմքերի ու չափանիշների որակման ու գնահատականի համեմատական վերլուծությունը:

Կարգապահական վարույթների վերաբերյալ հասանելի վիճակագրական տվյալները ներկայացվում են ստորև:

Տարեթիվ	Հարուցված վարույթների քանակը	Տույժերի քանակը	Տույժերի տեսակները
2016 թվական	3	1	Դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով
2017 թվական	16	13	6- դիտողություն 7- նկատողություն
2018 թվական	8	8	2- դիտողություն 5-նկատողություն 1 - Խիստ նկատողություն
2019 թվական	6	2	1-խիստ նկատողություն 1- նկատողություն
2020 թվական	7	2	1-Խիստ նկատողություն 1-պաշտոնից ազատում
2021 թվականի առաջին կիսամյակ	2	1	1-խիստ նկատողություն

2016 և 2017 թվականներին հարուցված եւ ուսումնասիրված կարգապահական պատասխանատվության վարույթները ընթացել են «Դատախազության մասին» ՀՕ-126-Ն օրենքի կարգավորումներով: Այդ ժամանակ գործող օրենքի 46-րդ հոդվածը սահմանում էր հետևյալ կարգապահական պատասխանատվության հիմքերը՝

- 1) ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում.
- 2) իր լիազորություններն իրականացնելիս օրենքը կոպիտ կամ պարբերաբար խախտելու դեպքում.
- 3) «Դատախազի վարքագծի կանոնագրքի» պահանջների էական խախտումների դեպքում.

4) սույն օրենքի 42-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի պահանջները չկատարելու դեպքում:

5) աշխատանքային կարգապահության կանոնները խախտելու դեպքում:

6) եկամուտների հայտարարագիր չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում:

Հարցմամբ ստացված տվյալների համաձայն՝ վարույթների գերակշիռ մասը եղել է վերոնշյալ հոդվածի առաջին մասի առաջին կետով նախատեսված հիմքով՝ ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում:

Նման որակում ստացել են մասնավորապես, դատախազության ստորաբաժանման ղեկավարի կողմից ստորաբաժանման աշխատանքները ոչ պատշաճ կազմակերպելը /2 դեպք/, մեղադրող դատախազի կողմից դատական նիստերին պարբերաբար չներկայանալը, մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ պատշաճ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում չիրականացնելը /5 դեպք 2017թին/: Այստեղ պետք է նշել սակայն, որ վերջին նշված հիմքի դրսևորումները հստակ չեն, թե մասնավորապես ինչումն է արտահայտվել պատշաճ վերահսկողություն ու դատավարական ղեկավարում չիրականացնելը, ինչը պրակտիկայում կարող է բազմազան դրսևորումներ ստանալ և դա հնարավոր կլիներ դիտարկել և ուսումնասիրել որոշումների ամբողջական հասանելիության պարագայում:

Վկայակոչված օրենսդրական կարգավորումների շրջանակներում վարույթներ հարուցվել են նաև դատախազի վարքագծի կանոնագրքի պահանջների էական խախտումների համար, ինչը դրսևորվել է մասնավորապես նիստի ընթացքում դատախազի կողմից ցուցաբերված վարքագծին՝ զսպվածության պահանջի առերևույթ խախտմանը, «ֆեյսբուք» սոցիալական ցանցով օգտատիրոջ հետ հրապարակային շփման ժամանակ ցուցաբերված վարքագծին և դատախազի կողմից քաղաքացու ընդունելության ժամանակ ցուցաբերված վարքագծին: Նշված եւ ոչ մի դեպքի դրսևորման մանրամասները կրկին հասանելի չեն:

Հարուցված վարույթների հիմքերի մեջ ներկայացվել է նաև լիազորություններն իրականացնելիս օրենքը կոպիտ կամ պարբերաբար խախտելը, ինչի դրսևորումները եղել են, օրինակ, պատշաճ դատախազական հսկողություն չցուցաբերելու հետևանքով մեղադրական եզրակացությունը ոչ պատշաճ կազմելը, քրեական գործի հարուցումը մերժելու հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քրեական գործի հարուցումը, վերաքննիչ բողոքի ձևին եւ բովանդակությանը ներկայացվող պահանջների խախտումը: Այստեղ կրկին հանգամանքները պարզ չեն:

Ինչ վերաբերվում է կարգապահական վարույթի արդյունքում վրա հասած տույժերի տեսակների, ապա հստակ նշել, թե որ հիմքով որ խախտման համար ինչ պատասխանատվություն է վրա հասել հնարավոր չէ, կրկին որոշումների բացակայության պատճառով: Կարող ենք միայն արձանագրել, որ, օրինակ, օրենքը կոպիտ կամ պարբերաբար խախտելու համար 2 դեպքով նշանակվել է նկատողություն տույժը, բայց թե որ դրսևորման համար, պարզ չէ:

Նմանապես, դատախազի պարտականությունները չկատարելու համար կրկին նշանակվել է նկատողություն կարգապահական տույժը:

Իսկ վարքագծի կանոնների կանոնագրքի պահանջների էական խախտումների համար երկու դեպքում նշանակվել է դիտողություն, իսկ մեկ դեպքում նկատողություն կարգապահական տույժ:

2018 թվականին հարուցված վարույթների հիմքերը մեծամասամբ եղել են ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հիմքով՝ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ պատշաճ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում չիրականացնելը, դատախազության ստորաբաժանման ղեկավարների կողմից ստորաբաժանման աշխատանքները ոչ պատշաճ կազմակերպելը, դատական նիստերին անհրազեկի բացակայությունները: Նման դեպքերում վրա հասած տույժերը եղել են՝ դիտողություն, նկատողություն և խիստ նկատողություն, սակայն կրկին հնարավոր չէ անհատականացնել, թե որ դեպքում է այն վրա հասել:

Արձանագրվել է նաև վարույթի հարուցում պաշտոնական հարաբերություններում դատախազի վարքագծի կանոնները խախտելու հիմքով, ինչը մասնավորապես դրսևորվել է քննիչի հետ աշխատանքային քննարկման ընթացքում դատախազի կողմից ցուցաբերված վարքագծի միջոցով, այն է՝ զսպվածության պահանջի առերույթ խախտմամբ: Նման դեպքում նշանակվել է նկատողություն կարգապահական տույժ:

Անդրադառնալով 2019 թվականին հարուցված վարույթների հիմքերին ու կիրառված տույժերի տեսակներին, կարող ենք ներկայացնել հետևյալ տեղեկությունները:

Հարուցված վարույթների մեջ կրկին զգալի թիվ է կազմել ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելը, ինչը մեծամասամբ դրսևորվել է մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ պատշաճ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում չիրականացնելու միջոցով և մեկ դեպքում գլխավոր դատախազի հրամանները պարբերական խախտելով:

Այս ժամանակաշրջանում վարույթներ հարուցվել են նաև դատախազի վարքագծի կանոնների խախտման հիմքով եւս: Օրինակ, դատախազի հեղինակությունը և բարի համբավը առերևույթ ոտնահարող վարքագիծ դրսևորելով, դատախազության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող կամ դատախազության անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելով:

Նշված դեպքերի առնչությամբ վրա հասած կարգապահական տույժերը եղել են նկատողություն և խիստ նկատողություն: Ընդ որում, 3 դեպքում վարույթը դադարեցվել է, մեկ դեպքում էթիկայի հանձնաժողովը խախտում չի հայտնաբերել:

Ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարելու համար վարույթների թիվը զգալի գերակշռող է եղել նաև 2020թվականին: Վերոնշյալ 7 վարույթներից 5ի դեպքում վարույթների հարուցման հիմք է հանդիսացել ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելը, մասնավորապես՝ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ պատշաճ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում չիրականացնելը, ինչի հետևանքով չի ապահովվել քրեական գործով վարույթի բազմակողմանիությունը, օբյեկտիվությունը և լրիվությունը:

Հարուցված վարույթներից երկուսը եղել են դատախազի վարքագծի կանոնները խախտելու հիմքով, մասնավորապես՝ դատախազի հեղինակությունը և բարի համբավը առերևույթ ոտնահարող վարքագիծ դրսևորելով, դատախազության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող կամ դատախազության անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելով: Ինչ վերաբերում է կարգապահական տույժերին, ապա 2 դեպքում նշանակվել է նկատողություն՝ դատախազի պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով, ընդ որում մեկ դեպքում հետագայում հարուցված առանձին կարգապահական վարույթի արդյունքներով նշանակվել է խիստ նկատողություն կարգապահական տույժը՝ դատախազի պարտականությունները չկատարելու հիմքով: Մեկ դատախազի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի արդյունքներով նշանակվել է պաշտոնից ազատում տույժը՝ դատախազի պարտականությունները չկատարելու հիմքով: Մեկ դեպքում էլ հարուցված կարգապահական վարույթի արդյունքներով նշանակվել է պաշտոնի իջեցում կարգապահական տույժը, ինչը սակայն այնուհետ նույն դատախազի նկատմամբ հարուցված վարույթի արդյունքներով հանգեցրել է

պաշտոնից ազատում տույժի՝ դատախազի պարտականությունները չկատարելու և դատախազի վարքագծի կանոնները խախտելու հիմքով:

Մեկ դեպքում էթիկայի հանձնաժողովի կողմից հաստատված է համարվել կարգապահական խախտման փաստը, որով սակայն հաստատված չի եղել դատախազի մեղավորությունը: Երկու դեպքում էլ հարուցված վարույթները դադարեցվել են այն հիմքով, որ եթե կարգապահական վարույթի ավարտի վերաբերյալ զեկուցագիրը և նյութերը ստանալուց հետո, Գլխավոր դատախազը դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը 7-օրյա ժամկետում չի ներկայացնում էթիկայի հանձնաժողովի քննարկման, ապա կարգապահական վարույթը դադարում է:

Նշված վարույթների և տույժերի մասով լրացուցիչ տեղեկություններ, սակայն, հասանելի չեն:

2021թվականի առաջին կիսամյակում հարուցվել է երկու կարգապահական վարույթ 3 դատախազի նկատմամբ: Հարուցման հիմք մեկ դեպքում երկու դատախազի նկատմամբ հանդիսացել է ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելը: Այն մասնավորապես վերաբերել է քրեակատարողական հիմնարկում առերևույթ վատ վերաբերմունքի դեպքի առնչությամբ տրված ահազանգին՝ ՀՀ գլխավոր դատախազի վերաբերելի հանձնարարականներին և հրամաններին համապատասխան ընթացքը չապահովվելուն:

Մեկ դեպքում կրկին հարուցվել է երկու դատախազի նկատմամբ՝ վարքագծի կանոնները խախտելու և ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հիմքով, ինչը վերաբերել է դատախազի հեղինակությունը և բարի համբավը առերևույթ ոտնահարող վարքագիծ դրսևորելուն, դատախազության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող կամ դատախազության անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուն: Այս դեպքում որպես կարգապահական տույժ մեկ դատախազի նկատմամբ նշանակվել է խիստ նկատողությունը կարգապահական տույժը:

Իսկ վերոնշյալ դեպքով մյուս երկու դատախազի նկատմամբ հարուցված վարույթի արդյունքներով հայտնաբերված թերացումներն ու բացթողումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մասնակցությամբ անցկացված օպերատիվ խորհրդակցությունում և տրվել են հանձնարարականներ: Վերջիններիս բովանդակային մասով կրկին լրացուցիչ տեղեկություն հասանելի չէ:



## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

- Օրենքը նախատեսում է դատախազների կարգապահական պատասխանատվության հիմքերը, որոնց ցանկը անհարկի լայնեցված է եւ նկատվում են հիմքերի կրկնություններ: Մասնավորապես, օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները ամրագրված են ինչպես որպես կարգապահական պատասխանատվության առանձին հիմք, այնպես էլ դատախազի պարտականություն, ինչը խախտելը կրկին կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության,
- Նույնը վերաբերում է արտապաշտոնեական հարաբերություններում պահանջվող կանոններին, որոնք բովանդակային առումով կրկին ներառված են վարքագծի ընդհանուր կանոնների մեջ,
- Օրենքով սահմանված հիմքերի մեջ նկատելի են լայն և պրակտիկայում տարբեր մեկնաբանությունների տեղիք տվող դրույթներ: Խոսքը մասնավորապես վերաբերում է օրենքով սահմանված վարքագծի կանոններին: Մասնավորապես, այնպիսի կարգավորումներ, ինչպիսիք են՝ «խուսափել դատախազի կոչմանը անհարիր այնպիսի գործնական, մասնագիտական կամ բարոյական կապերից...», «իր համար ընդունել այնպիսի սահմանափակումներ, որոնք կապահովեն իր հավասարակշռվածության ու անաչառության հասարակական ընկալումը», «լինել անհանդուրժող գործընկերների վարքագծի կանոնների թույլ տված խախտումների և ոչ բարոյական վարքագծի նկատմամբ» և այլն:
- Օրենքով, որպես կարգապահական պատասխանատվության առանձին հիմք նախատեսված աշխատանքային ներքին կարգապահական կանոնները լրացուցիչ օրենսդրական ամրագրում չեն ստացել: Վերջիններս հասանելի չեն նաեւ ՀՀ դատախազության պաշտոնական կայքում:
- Օրենքով սահմանված է, որ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու, այդ թվում՝ օրենքով սահմանված իրավունքների և

պարտականություններ իրականացման կարգը սահմանում է գլխավոր դատախազը: Իրավունքների իրականացման Կարգին ենթաօրենսդրական կարգավորում տալը կարող է ընդունելի լինել, սակայն ՀՀ դատախազական համակարգում մի շարք իրավասություններ, ինչպես սույն կարգավորումը, թողնված են ՀՀ գլխավոր դատախազի հայեցողությանը, ինչը պրակտիկայում կարող է խնդրահարույց լինել:

- Կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթին մասնակցություն ունի օրենքով սահմանված Էթիկայի հանձնաժողովը, որի դերի և կարգավիճակի վերաբերյալ կարգավորումները բավարար և հստակ չեն:
- Օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Էթիկայի հանձնաժողովի դերակատարումը կարգապահական պատասխանատվության գործում կրում է ձևական բնույթ, քանի որ հիմնական դերակատարումը տրված է գլխավոր դատախազին:
- Ավելին, վերջինս անդամների և ձևավորման կարգավորումների պատճառով չի հանդիսանում միջազգային ստանդարտներին համահունչ գործող մարմին: Մասնավորապես, Անդամների գերակշիռ մասը հանդիսանում են դատախազներ: Իսկ ոչ դատախազ հանդիսացող իրավաբան-գիտնականները նշանակվում են գլխավոր դատախազի կողմից, ինչը այս մարմնի գործունեության օբյեկտիվության և անկախության տեսանկյունից արդեն իսկ կասկածների տեղիք է տալիս:
- Օրենքը չի սահմանում, թե Էթիկայի հանձնաժողովի անդամները որոշում կայացնելիս ինչ չափանիշների հիման վրա պետք է ներքին համոզմունք ձևավորեն և ինչպես առաջնորդվեն: Այսինքն, որոշման կայացումը թողնված է բացառապես անդամի հայեցողությանը:
- Օրենքը եւ կարգը մանրամասն չեն կարգավորում նաեւ վարույթն իրականացնող հանձնախմբի ձևավորման կամ մեկ դատախազի ընտրության չափանիշներն ու ընթացակարգը, չի նախատեսվում հնարավոր շահերի բախման ռիսկերը:
- Դատախազների կարգապահական պատասխանատվության ինստիտուտը չի գործում թափանցիկության ու հրապարակայնության սկզբունքների համահունչ, քանի որ ոչ վարույթի նախնական փուլի վերաբերյալ տվյալները, ոչ էլ կայացվող վերջնական որոշումները հրապարակման ենթակա չեն:
- Ըստ էության, դատախազների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ հրապարակային հասանելի տվյալներ գոյություն չունեն, ինչը համակարգի նկատմամբ անվստահության ձևավորման լրացուցիչ գործոն է:
- Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու վերաբերյալ Կարգը չնայած որոշակի լրացուցիչ կարգավորումներ է տալիս Օրենքի համապատասխան կարգավորումներին, այնուհանդերձ, այն դեռեւս թերի է և

վերանայման կարիք ունի: Մասնավորապես, կարգավորված չեն էթիկայի հանձնաժողովում որոշում կայացնելու հիմքում դրվող չափանիշները, ընթացակարգի առանձնահատկությունները, առանձին և հստակ սահմանված չեն կարգապահական խախտման մեջ մեղադրվող դատախազի իրավունքներն ու պարտականությունները:

## Առաջարկություններ

- Վերանայել եւ հստակեցնել կարգապահական պատասխանատվության հիմքերը;
- Վերացնել հիմքերի անհարկի կրկնությունները, օրինակ արտապաշտոնական հարաբերությունների պահանջները, որոնք առկա են նաեւ վարքագծի կանոններում, դատախազի պարտականություններն ու սահմանափակումները, եւ այլն;
- Պատասխանատվության հիմքերը սահմանել հնարավորինս հստակ եւ կանխատեսելի
- Օրենքով սահմանել դատախազի կանխատեսելի վարքագծի կանոններ եւ ապահովել դրանց միասնական կիրառությունն ու մեկնաբանությունը պրակտիկայում
- Լրացուցիչ կարգավորում տալ դատախազների աշխատանքային ներքին կանոններին ու վերջիններս դարձնել հրապարակային;
- Վերանայել կարգապահական վարույթ հարուցող եւ իրականացնող մարմինները, իրավասություններն ու վարույթի ընթացքը, մասնավորապես`
- Վերացնել Գլխավոր դատախազի կենտրոնական եւ էական դերակատարումը դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում;
- Վերացնել հանձնախմբի կամ մեկ դատախազի կողմից վարույթ իրականացնելը, վարույթի իրականացումը, վարույթը դարձնելով հնարավորինս քիչ բյուրոկրատական, հստակ չափանիշների ու ընթացակարգերի հիման վրա գործող;
- Ստեղծել նոր, անկախ գործող և օբյեկտիվ չափանիշներով ձևավորվող կարգապահական հանձնաժողով, որը կհանդիսանա կարգապահական վարույթի հարուցման հիմնական դերակատարը;

- Հստակեցնել կարգապահական պատասխանատվության միջոցների ընտրության ու նշանակման կարգն ու չափանիշները: